«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Ենգիբարյան Սաթենիկ

Հետազոտող ուսուցիչ՝ .....

անուն, ազգանուն

Եղեգնուտի միջնակարգ դպրոց

.....

դպրոց

Գևորգյան Կարինե

Մենթոր ուսուցիչ_____

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2023

Բովանդակություն

Ներածություն …… 3
Ուսուցչի և ծնողների համագործակցության էությունը,
նպատակը և խնդիրները …….....…… 5
Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը և մեթոդները …… 10
Դպրոցի և ընտանիքի համագործակցության հետազոտության
արդյունքների վերլուծություն …… 14
Եզրակացություն …… 24
Գրականության ցանկ ……...… 25
Հավելված …… 26

Ներածություն

Ընտանիքում արմատներ են դրվում, որոնցից հետո աճում
են և ճյուղեր, և ծաղիկներ, և պտուղներ։ Ընտանիքի
բարոյական առողջության վրա կառուցվում է դպրոցի
մանկավարժական իմաստնությունը։
Վ.Ի.Սուխոմլինսկի

Հասարակության մեջ կատարվող սոցիալական, տնտեսական վերափոխումների պայմաններում կրթական համակարգում առաջին պլան են մղվում ընտանիքի և դպրոցի փոխգործակցության խնդիրները՝ որպես մատաղ սերնդի դաստիարակության միջոց։ Գլոբալացված աշխարհի մարտահրավերների պայմաններում, ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկություններով պայմանավորված առանձնակի կարևորություն է ստանում սովորողի, աշակերտի դաստիարակության գործընթացի ուսումնասիրումը, ընտանիքի և դպրոցի համագործակցության դերի, բացահայտումը, ներուժի իրացումը:

Ժամանակակից տնտեսական իրավիճակի պայմաններում շատ ծնողներ երեխաների դաստիարակության ընտանիքի առաքելությունը փոխանցում են ուսուցչին։ Երեխայի դաստիարակությունը սկսվում է ընտանիքում, և եթե ծնողները չեն փոխանցում համամարդկային, բարոյական, մշակութային արժեքներ, չեն փոխգործակցում դպրոցի հետ դաստիարակության խնդիրների հաղթահարման գործում, ապա երեխայի անձի զարգացումը չի կարող լինել արդյունավետ։

ՀՀ Հանրակրթության օրենքի հիմնական խնդիրներից մեկն է ընտանիքին ապահովել հոգեբանամանկավարժական աջակցություն և բարձրացնել ծնողների մտահաստությունը երեխաների կրթության և դաստիարակության, առողջության պահպանման և ամրապնդման հարցերում: Մատաղ սերնդի դաստիարակության ուղղությամբ դպրոցների աշխատանքի արդի վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտանիքի հետ համագործակցության կազմակերպման գործընթացին դպրոցի ֆորմալ մոտեցումը, ծնողների հետ փոխգործակցության բովանդակության, ձևերի և մեթոդների ոչ բավարար տիրապետումը չի նպաստում դաստիարակության

արդյունավետության ապահովմանը: Դպրոցի և ընտանիքի համագործակցության խնդիրը միշտ եղել է մանկավարժների և հոգեբանների ուշադրության կենտրոնում:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության խնդրին հոգեբանամանկավարժական գրականության մեջ անբավարար ուշադրություն է դարձվում, թեև հենց դպրոցում է երեխան ստեղծում միջանձնային հարաբերություններ, ներգրավվում ուսումնական գործունեության մեջ, այսինքն՝ սկսվում է երեխայի անձի կայացման նոր փուլ: Համաշխարհայնացման գործընթացների արդյունքում փոխակերպվող հասարակության հազարամյակների ընթացքում կուտակված փորձի, ընտանիքի և դպրոցի համագործակցության, ընտանեկան դաստիարակության միջոցների արժեվորման, իմաստավորման և մանկավարժական արդի պրակտիկայում կիրառման անհրաժեշտությունը, երեխայի դաստիարակության մեջ ընտանիքի և դպրոցի համագործակցության եղանակների անբավարար մշակվածությունը պայմանավորում են մեր կողմից «Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում» հետազոտության ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Հետազոտության խնդիրները: Նշված նպատակի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել դպրոցի և երեխաների համագործակցության էությունը, նպատակը, խնդիրները և դերը,
2. ուսումնասիրել դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը և մեթոդները,
3. ուսումնասիրել և վերլուծել դպրոցի և ընտանիքի համագործակցության կատարելագործման ուղիները,
4. անցկացնել և վերլուծել դպրոցի և ընտանիքի համագործակցության հետազոտության արդյունքները:

Ուսուցչի և ծնողների համագործակցության էությունը, նպատակը և խնդիրները

Ժամանակակից հասարակությանը պետք են կրթված, ֆիզիկապես և հոգեպես առողջ, նախաձեռնող մարդիկ, ովքեր կարող են հեշտությամբ հարմարվել կյանքի ժամանակակից պայմաններին, կարողանում են ինքնուրույն որոշումներ կայացնել ընտրության իրավիճակում, կանխատեսելով հնարավոր հետևանքները: Պետության կողմից ընտանեկան դաստիարակության գերակայության ճանաչումը պահանջում է ընտանիքի և ուսումնական հաստատության համագործակցության և վստահության հարաբերություններ: Լավ հաստատված, կազմակերպված ընտանեկան, դպրոցական փոխազդեցությունը հնարավորություն է տալիս ծնողներին գիտակցել նման անձի ձևավորումն ու զարգացումն ապահովող նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, որակներ, դիրքորոշում ձեռք բերելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ձևավորում է ուսուցիչների հետ անմիջական հաղորդակցության ընտանիքի կարիքը, որն օգնում է դաստիարակել ֆիզիկապես և սոցիալապես առողջ անհատ՝ հարմարված ժամանակակից կյանքի պայմաններին [5, էջ 67]:

Հասարակության զարգացման ներկա փուլում ընտանեկան արժեքների կորուստը մյուսների հետ միասին դարձել է ժողովրդագրական խնդիրների հիմնական պատճառներից մեկը: Հետևաբար, կարևոր և հրատապ խնդիրներից մեկը դպրոցի և ընտանիքի համագործակցությունն է: Կրթության խնդիրների լուծումը հնարավոր է միայն ընտանիքի և դպրոցի փոխգործակցության դեպքում: Ընտանեկան և դպրոցական համագործակցությունը դառնում է ավելի արդիական և պահանջված: Երկու կողմն էլ ներկայացնում են իրենց, երբեմն արդար պահանջները: Ուսուցիչները բողոքում են ծնողների կողմից երեխաների դպրոցական կյանքի նկատմամբ հետաքրքրության բացակայությունից, երբեմն դաստիարակությունից, բարոյական արժեքների բացակայությունից, պասիվությունից: Ծնողներն էլ դժգոհ են չափից ավելի ծանրաբեռնվածությունից, մանկավարժի անտարբերությունից, մանկական կոլեկտիվում եղած փոխհարաբերություններից: Հին դպրոցական աֆորիզմն ասում է. «Երեխաների հետ աշխատանքում ամենադժվարը ծնողների հետ աշխատանքն է»:

Ուսուցչի և ծնողի համագործակցությունը գործունեության նպատակների համատեղ սահմանումն է, առաջիկա աշխատանքի համատեղ պլանավորումը, ուժերի և միջոցների համատեղ բաշխումը, ժամանակի ընթացքում գործունեության առարկան՝ յուրաքանչյուր մասնակցի հնարավորություններին համապատասխան, աշխատանքի արդյունքների համատեղ վերահսկողությունը և գնահատումը, ապա նոր նպատակների և խնդիրների կանխատեսումը: Ծնողների և մանկավարժների միության ստեղծման գործում կարևորագույն դերը պատկանում է մանկավարժներին: Ոչ բոլոր ծնողներն են արձագանքում մանկավարժի համագործակցության ձգտմանը, հետաքրքրություն ցուցաբերում երեխայի դաստիարակության ուղղությամբ ջանքերի միավորման նկատմամբ [4, էջ 35]:

Միայն ուսուցիչների և ծնողների համագործակցության գործընթացում կարելի է հաջողությամբ լուծել աշակերտի անձի զարգացման խնդիրը: Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը պետք է ուղղված լինի ծնողների ակտիվ ներգրավմանը ուսումնադաստիարակչական գործընթացի արտադասարանային, արտադպրոցական, ժամանցային գործունեության մեջ, երեխաների և ծնողների հետ համագործակցությանը: Դպրոցի և ընտանիքի փոխգործակցության հիմնական գործառույթներն են.

1) տեղեկատվական,

2) դաստիարակչական-զարգացնող,

3) ձևավորման,

4) առողջության պահպանման, առողջարարական;

5) վերահսկող [7, էջ 210]:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակաուղղված գործընթաց է, որի արդյունքում երեխայի զարգացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծվում: Որքան բարձր է համագործակցության մակարդակը, այնքան ավելի հաջող են լուծվում երեխաների դաստիարակության խնդիրները: Ուսուցիչների և ընտանիքի միջև համագործակցային հարաբերությունների ձևավորումը երկարատև գործընթաց է, որի հաջողությունը կախված է նրանից, թե ինչ սկզբունքներ են դրված հարաբերությունների հիմքում:

Բարեփոխումների ընթացքում կրթական համակարգը փոխվում է այնքան արագ, որ ծնողները հաճախ բավարար պատկերացում չունեն փոփոխությունների մասին, կենտրոնանալով ուսումնադաստիարակչական գործունեության վրա, հիմնականում դպրոցական փորձով, որը հաճախ հետ է մնում ժամանակակից պահանջներից: Այս անհամապատասխանությունը լուծելու համար մանկավարժին անհրաժեշտ է ուսումնադաստիարակչական գործընթացը դարձնել առավելագույնս բաց, և մատչելի ծնողների համար: Ծնողները սկսում են ձգտել ակտիվ համագործակցել դպրոցի և մանկավարժի հետ, եթե նրանց միջև փոխըմբռնում է առաջանում: Իսկ այն ծնվում է համատեղ գործունեության մեջ: Այսպիսով, ուսուցիչը պետք է հոգ տանի ընտանիքի և դպրոցի փոխազդեցության կենսական ծրագրի կազմակերպիչ դառնալու մասին: Այս ուղղությամբ մանկավարժների հիմնական խնդիրներն են նպաստել ընտանիքի միասնությանը, համախմբմանը, ծնողների և երեխաների միջև փոխհարաբերություն-ների հաստատմանը, ընտանիքում երեխայի համար հարմարավետ պայմանների ստեղծմանը, ինչպես նաև ընտանիքի համակողմանի համակարգված ուսումնասի-րությանը, ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին [1, էջ 108]:

Ուսուցիչը պետք է շփվի ծնողների հետ, նա ուզում է, թե ոչ: «Ուսուցիչ-ծնող» հարաբերությունները կարող են գոյություն ունենալ և ձևավորվել որոշակի ձևով և առանց նրանց մասնակիցների անմիջական շփումների: Այս դեպքում կապող օղակ է դառնում երեխան: Սակայն դպրոցի հետ ծնողների շփման բացակայությունը, ինչպես նաև դպրոցի և ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի ուսուցմանը և դաստիարակությանը: Երեխայի հետ մանկավարժական խնդիրների լուծման հարցում թերահավատությունից, տարանջատումից խուսափել ուսուցչին կօգնի հետևյալ չափանիշների վրա հենվելը.

- պատասխանատվության զգացում աշակերտների ծնողների հանդեպ՝ իրենց երեխաների կրթության և դաստիարակության, հոգեբանա-մանկավարժական կոմպետենտության համար,
- ծնողների հետ մանկավարժական շփումների ակտիվ և մշտական որոնում (այլ ոչ թե դիմում նրանց միայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է նրանց օգնությունը),

- ծնողական զգացմունքների նկատմամբ հարգալից վերաբերմունք, թույլ չտալ երեխաների ընդունակությունների և նրանց վարքագծի անփույթ և չհիմնավորված գնահատական,
- երեխաների աչքերում ծնողների հեղինակության բարձրացում (նրանց ծնողների առավել արժեքավոր հատկանիշները երեխաներին ցույց տալը, ծնողների մանկավարժական գործունեության մեջ այդ ունակությունների և որակների հաշվառումը),
- ծնողների նկատմամբ անհրաժեշտ պահանջներ ներկայացնելիս տակտ և հիմնավորվածություն (միևնույն ժամանակ կարևոր է նրանց վրա չտեղափոխել իրենց պարտականությունները),
- համբերություն քննադատական հայտարարություններն ընդունելու, դրանք մասնագիտական զարգացման գործընթացում հաշվառելու համար [3, էջ 25]:

Համեմատաբար հանգիստ կրտսեր դպրոցական տարիքից հետո բուռն դեռահասությունը բարդ է թվում: Այս փուլում զարգացումն իսկապես արագ տեմպերով է ընթանում, հատկապես շատ փոփոխություններ են նկատվում անհատականության ձևավորման առումով: Եվ, թերևս, դեռահասի հիմնական առանձնահատկությունը անձնական անկայունությունն է:

Իրավիճակը բարդանում է, եթե բարձր պահանջարկն ու վերահսկողությունը զուգորդվում են երեխայի նկատմամբ հուզականորեն սառը, մերժող վերաբերմունքի հետ: Այստեղ շփման ամբողջական կորուստն անխուսափելի է: Նույնիսկ ավելի ծանր դեպք են անտարբեր ու դաժան ծնողները: Նման ընտանիքների երեխաները հազվադեպ են վստահում մարդկանց, դժվարանում են շփվել, հաճախ իրենք դաժան են, չնայած նրանք սիրո ուժեղ կարիք ունեն: Ծնողների անտարբեր վերաբերմունքի համադրությունը վերահսկողության բացակայության հետ՝ թերխնամքը նույնպես ընտանեկան հարաբերությունների անբարենպաստ տարբերակ է: Դեռահասներին թույլատրվում է անել այն ամենը, ինչ ցանկանում են, նրանց գործերով ոչ ոք չի հետաքրքրվում: Վարքագիծը դառնում է անվերահսկելի: Եվ դեռահասները, անկախ նրանից, թե ինչպես են նրանք երբեմն ըմբոստանում, ծնողների կարիքն ունեն որպես

հենարան, նրանք պետք է տեսնեն մեծահասակի, պատասխանատու վարքի օրինակ, որի վրա պետք է կենտրոնանան [5, էջ 68]։

Գերխնամքը՝ երեխայի նկատմամբ չափազանց մեծ խնամք, նրա ամբողջ կյանքի նկատմամբ չափազանց մեծ վերահսկողություն, որը հիմնված է սերտ հուզական շփման վրա, հանգեցնում է պասիվության, անկախության բացակայության և հասակակիցների հետ շփվելու դժվարությունների։ Դժվարություններ են առաջանում նաև ծնողների չափից մեծ ակնկալիքների դեպքում, որոնք երեխան ի վիճակի չէ արդարացնել։ Ոչ ադեկվատ սպասումներ ունեցող ծնողների հետ սովորաբար դեռահասության շրջանում երեխան կորցնում է հոգևոր մտերմությունը։ Դեռահասը ցանկանում է ինքնուրույն որոշել, թե իրեն ինչ է պետք, և ընդվզում է՝ մերժելով իրեն խորթ պահանջները։

Ընտանիքում կրթական նպատակներին հասնելու համար ծնողները դիմում են ազդեցության տարբեր միջոցների՝ խրախուսել և պատժել երեխային։ Խրախուսանքի ողջամիտ օգտագործման արդյունքում երեխաների՝ որպես անձի զարգացումը կարող է արագացվել, ավելի հաջող լինել, քան արգելքների և պատիժների օգտագործման դեպքում։ Պատիժն ավելի արդյունավետ է այն դեպքում, երբ այն հանցանքը, որի համար նա պատժվում է, ողջամտորեն բացատրվում է նրան։ Ցանկացած ֆիզիկական ազդեցություն երեխայի մոտ ձևավորում է համոզմունք, որ նա նույնպես կարող է ուժով գործել, երբ իրեն ինչ-որ բան չի սազում։

Դաստիարակության հատուկ պայմաններ են զարգանում այսպես կոչված ոչ լիարժեք ընտանիքում, որտեղ ծնողներից մեկը բացակայում է։ Տղաները շատ ավելի սուր են ընկալում, քան աղջիկները, ընտանիքում հոր բացակայությունը. առանց հայրերի, նրանք հաճախ ագրեսիվ և անհանգիստ են։ Ընտանիքի քայքայումը բացասաբար է անդրադառնում ծնողների և երեխաների հարաբերությունների վրա։ Շնորհիվ այն բանի, որ ծնողներն իրենք են հոգեկան հավասարակշռության խախտում ունենում, նրանք սովորաբար չունեն ուժ՝ օգնելու երեխաներին հաղթահարել առաջացած խնդիրները հենց կյանքի այն պահին, երբ նրանք հատկապես կարիք ունեն իրենց սիրո և աջակցության։

Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը և մեթոդները

Ընտանիքի հետ համագործակցության գլխավոր ձևերն են անհատական և կոլեկտիվ: Ծնողների հետ աշխատանքի անհատական ձևերը ներառում են զրույց, անհատական խորհրդատվություն, տնային այցելություն: Ծնողին խորհրդատվության հրավիրելու առիթ կարող է լինել երեխայի նկատմամբ մանկավարժի դիտարկման արդյունքը, երեխայի՝ դասարանի և մանկավարժների հետ շփման խնդիրները, կոնֆլիկտային իրավիճակը, երեխայի նախաձեռնությունը կապված ընտանեկան իրավիճակի հետ: Ընտանիքի հետ անհատական աշխատանքի նախապատրաստման և անցկացման ժամանակ ծնողների հետ շփման որոշակի էթիկա կա. անհրաժեշտ է նախապես քննարկել խորհրդատվություն անցկացնելու հնարավորությունը:

Ծնողները պետք է հրավիրվեն խորհրդատվության հանգիստ ձևով: Խորհրդատվության ժամանակը պետք է համաձայնեցվի: Ծնողները չպետք է սպասեն դռան տակ իրենց ճակատագրին: Ցանկալի է, որ երկու ծնողն էլ ներկա լինեն հանդիպմանը: Անհրաժեշտ է հստակ ձևակերպել խորհրդատվության նպատակները, հրատապությունը: Ծնողները պետք է հնարավորություն ունենան լիարժեք խոսել քննարկվող խնդրի մասին: Ծնողների բոլոր «կողմ» և «դեմ» փաստարկները պետք է ուշադիր լսվեն: Խորհրդատվության ընթացքում ծնողները պետք է հստակ առաջարկություն ստանան քննարկվող խնդրի վերաբերյալ: Եթե դրա անհրաժեշտությունը կա, ապա խորհրդատվության ընթացքում ծնողները հնարավորություն են ստանում հանդիպել մասնագետների հետ, կազմակերպել երեխայի լրացուցիչ խորհրդատվություն: Եթե խորհրդատվության ընթացքում երեխայի ներկայությունը պարտադիր է, ապա նա հրավիրվում է հանդիպման: Եթե մանկական կոլեկտիվում կան խնդիրներ, որոնք վերաբերում են մի քանի ընտանիքի, ապա կարելի է թեմատիկ խորհրդատվություն անցկացնել: Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ նման խորհրդատվությունը օգտակար կլինի միայն այն դեպքում, եթե ծնողներն իսկապես գիտակցում են այն խնդիրը, որին նրանց հրավիրել են: Մեծ նշանակություն ունի դաստիարակչական զրույցը: Զրույցն ավելի լավ է անցկացնել կոնֆլիկտային իրավիճակները կանխելու, ծնողների և երեխաների, մանկավարժի և ընտանիքի միջև փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով: Ծնողների հետ աշխատանքում զրույցն օգտագործելն

անհրաժեշտ է վստահելի մթնոլորտի հասնելու, կոնֆլիկտային իրավիճակներում շփման կետերը բացահայտելու համար: Զրույցի արդյունքները չպետք է հրապարակային լինեն, եթե դրա մասնակիցներից որևէ մեկը դա չի ցանկանում: Զրույցի ընթացքում մանկավարժը պետք է ավելի շատ լսի, այլ ոչ թե դաստիարակման հանձնարարական տա [2, էջ 85]:

Այցելել երեխային տանը ծայրահեղ միջոց է: Ոչ շատ ծնողներ են պատրաստ թույլ տալ, որ դասղեկը կամ ուսուցիչը անհանգստացնի իրենց տանը, բայց եթե համատեղ դպրոցական կյանքը նոր է սկսվում, անհրաժեշտ է դժվարությունների և ուրախության ժամանակ սովորել միասին լինել: Ուսուցիչը կարող է ոչ միայն գալ և ստուգել աշակերտի անկյունը, այլև շնորհավորել ծննդյան օրը կամ այցելել հիվանդ երեխային իր դասընկերների հետ: Սակայն վերջին շրջանում մենք հանդիպում ենք մի իրավիճակի, որ երեխաներն իրենց ընտանիքներում բռնության են ենթարկվում մեծահասակների կողմից, մայրերը մոռանում են իրենց կոչումի մասին: Նման ընտանիքների երեխաները զգում են իրենց օտարված, և միշտ չէ, որ դպրոցը և դասարանի ղեկավարը գիտեն, թե ինչ է կատարվում աշակերտի ընտանիքում: Եթե ծնողական կոմիտեն տեղյակ է այն խնդրահարույց իրավիճակների մասին, որոնք առկա են դասարանի աշակերտների ընտանիքներում, ապա անհրաժեշտ է լինել նման երեխաների ընտանիքներում՝ չթողնելով նրանց առանց աջակցության և օգնության: Խմբային մեթոդները ներառում են համագործակցության այնպիսի ձևեր, ինչպիսիք են ծնողական ակումբները, ծնողական ժողովները: Ընտանիքի հետ աշխատանքի բոլոր այս ձևերը, նրանց բազմազանությունը դպրոցում օգնում է ծնողներին ընտրել ուսուցիչների և դպրոցի այլ մասնագետների հետ կապի տեսակը, որն առավել ընդունելի է նրանց համար: Աշխատանքի հատկապես կարևոր ձևը կրթական հաստատության խորհրդի, ծնողական կոմիտեի, հայրերի խորհրդի հետ փոխգործակցությունն է, որոնք ընտրվում են ծնողական խորհրդի կողմից ամբողջ ուսումնական տարվա համար [6, էջ 17]:

Ընտանեկան և դպրոցական կրթությունը սերտորեն փոխկապակցված են և լրացնում են միմյանց, բայց չեն համընկնում: Հետևաբար, բաղադրիչներից մեկի լիակատար բացակայությունը միշտ հղի է լուրջ կորուստներով՝ ինչպես կրթության

օբյեկտի, այնպես էլ կրթական գործունեության սուբյեկտների՝ ընտանիքի և դպրոցի համար: Անձի վրա իր առանձնահատկության և ազդեցության յուրահատկության պատճառով ընտանիքը անհատի բնականոն զարգացման և դաստիարակության արդյունավետ գործոն է: Ընտանիքում երեխան սովորում է ծնողական ջերմություն և սեր, ինքն է պատասխան զգացմունքներ ցուցաբերում մոր և հոր, եղբայրների, քույրերի, հարազատների նկատմամբ: Ծնողների բարձր պահանջկոտությունը իրենց և երեխաների նկատմամբ, ընտանիքի ավագ և կրտսեր անդամների փոխադարձ հարգանքը, բարեկամության մթնոլորտը, վստահությունը և փոխըմբռնումը դպրոցում, ընտանիքում և արտադպրոցական երեխաների խմբերում կրթության միասնական պահանջների հաստատման ամենակարևոր պայմաններն են:

Ծնողների մանկավարժական մշակույթի որակի բարձրացումը դպրոցի և ամբողջ հասարակության կարևոր խնդիրներից մեկն է: Մեր օրերում ընտանիքի հնարավորությունները երեխայի դաստիարակության գործում զգալիորեն ընդլայնվել են: Ծնողների մեծ մասը երեխաների դաստիարակության գործում դպրոցի իսկական դաշնակիցներն են, ակտիվորեն օգնում են բոլոր գործողություններում, լսում են ուսուցիչների խորհուրդները: Այնուամենայնիվ, կան նաև ծնողներ, ովքեր անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում երեխաներին, և երբեմն նրանց վարքագիծը բացասաբար է ազդում երեխաների վրա: Դաստիարակության շատ թերություններ բացատրվում են ծնողների մանկավարժական անգրագիտությամբ:

Շատ մայրերի և հայրերի անպատրաստությունը երեխաներին դաստիարակելու համար, երեխայի զարգացման մեջ ամբողջ կրթական, դաստիարակչական գործընթացի բարդությունը չհասկանալը, դստեր կամ որդու դաստիարակության վրա գործոնների ազդեցության բնույթն ու աստիճանը ճանաչելու անկարողությունը հաճախ հանգեցնում է ընտանեկան դաստիարակության լուրջ ձախողումների: Այս սխալները բացասաբար են անդրադառնում երեխաների կրթության և դաստիարակության արդյունավետության վրա, դեռահասության շրջանում դառնում իրավախախտումների հիմնական պատճառ: Հետևաբար, անհրաժեշտ է ծնողներին պատրաստել իրենց պարտականությանը՝ երեխայի դաստիարակությունն իրականացնելու համար նրանց մեջ սերմանել դրական հատկություններ և որակներ:

Դիտարկումները ցույց են տալիս, որ որոշ ընտանիքներում ծնողները բավականին անտարբեր են երեխաների ուսման նկատմամբ, գործնական օգնություն երբեմն չի տրամադրվում, նույնիսկ եթե դրա կարիքը կա: Նման ծնողները պետք է ոչ միայն զինվեն երեխաներին կրթական օգնություն ցուցաբերելու ռացիոնալ տեխնիկայով և նրանց ծանոթացնեն ուսումնական ծրագրի բովանդակությանը, այլև համոզվեն, որ դա կարևոր է իրենց երեխաների համար [7, էջ 210]:

Ասվածին որպես ապացույց բերենք այն, որ սովորողների մեծ մասը տնային աշխատանք է կատարում երեկոյան, երբ ընտանիքի բոլոր անդամները հավաքվում են միասին: Այս միջավայրում սովորողը հաճախ շեղվում է տնային գործեր կատարելու համար, երբեմն ընտանիքի բոլոր անդամները միաժամանակ փորձում են օգնել սովորողին՝ մոռանալով, որ նրա համար կարևոր է ինքնուրույն կատարել տնային առաջադրանքները:

Դպրոցական և ընտանեկան համատեղ դաստիարակությունը թույլ է տալիս ոչ միայն լավ կրթել երիտասարդ սերնդին, այլև միևնույն ժամանակ կարևոր պայման է ընտանիքի, մոր և հոր բարոյական կերպարը բարելավելու համար: Առանց երեխաների դաստիարակության, առանց հոր և մոր ակտիվ մասնակցության դպրոցի կյանքում, առանց մեծահասակների և նրանց երեխաների մշտական հոգևոր հաղորդակցման և փոխադարձ հոգևոր հարստացման, ընտանիքը՝ հասարակության առաջնային բջիջը, ինքնին անհնար է, դպրոցը՝ ամենակարևոր դաստիարակչական ինստիտուտը, անհնար է, և հասարակության բարոյական առաջընթացը նույնպես անհնար է:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության հետազոտության արդյունքների վերլուծություն

Դպրոցի և ընտանիքի համագործակցության հետազոտությունն իրականացվել է Արմավիրի մարզի, Եղեգնուտ համայնքի միջնակարգ դպրոցում: Հետազոտության մասնակիցները նախապես ծանոթացել են հարցաթերթին, տեղեկացվել լրացման կարգին: Հետազոտությունն անցկացվել է 2023 թվականի սեպտեմբեր ամսին, որին մասնակցել են 20 ծնող: Հետազոտության մասնակիցներին տեղեկացրել ենք, որ հարցումն անանուն է, անձնական տվյալների գաղտնիությունը երաշխավորված է և հետազոտության տվյալները կիրառվելու են բացառապես գիտական նպատակներով: Յուրաքանչյուր մասնակից ստացել է իր հարցաթերթը:

Չնայած գիտական հոգեբանական մեթոդիկաների բազմազանությանը մենք նպատակահարմար ենք գտել մանկավարժական դիտարկման, զրույցի և հարցման մեթոդիկաների կիրառումը, քանզի դրանք համապատասխանում են մեր կողմից առաջադրված խնդիրների լուծմանը: Մանկավարժական դիտարկման և զրույցի միջոցով հնարավոր է բացահայտել հետազոտվողների սուբյեկտիվ պատկերացում-ները հանրակրթական դպրոցի աշակերտի դաստիարակության գործում ընտանիքի և դպրոցի համագործակցության կարևորության, արդյունավետության վերաբերյալ, բացահայտել դպրոցի առկա խնդիրները: Հանդիպումների, զրույցի, դիտարկման միջոցով ստացված տվյալները համադրելով մեր հարցաթերթի արդյունքների հետ, ավելի ամբողջական պատկեր ստացանք: Հարցումն իրականացվել է մեր կողմից կազմված 10-ական փակ հարց պարունակող հարցաթերթերով:

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված առաջին հարցը վերաբերվում էր դպրոցին, որտեղ սովորում են նրանց երեխաները: Հարցն այսպիսին էր. «Ձեզ դու՞ր է գալիս դպրոցը, որտեղ սովորում են ձեր երեխաները»: Այս փակ հարցի համար որպես պատասխան ծնողներին առաջարկել ենք երեք պատասխանի հնարավորություն. «Այո», «Ոչ» և «Ոչ այնքան» տարբերակները: Մեր հետազոտության մասնակից 20 ծնողներից 20-ը կամ ծնողների 100%-ն ընտրել են «Այո» տարբերակը, «Ոչ այնքան» և «Ոչ» տարբերակը չի ընտրել և ոչ մի ծնող: Այսպիսի պատասխան, իհարկե, կարելի էր սպասել, քանի որ Հանրակրթության օրենքը ծնողին իրավունք է

տալիս ընտրել դպրոցը, որտեղ պետք է սովորի նրա երեխան: Ընթացիկ կոնֆլիկտային իրավիճակներ, դժվարություններ, դժգոհություններ, իհարկե լինում են, բայց դրանք հաճախ հարթվում են դպրոցի և ընտանիքի համագործակցության շրջանակներում: Իսկ եթե ծնողը դպրոցից իսկապես դժգոհ է, ապա նա հիմնականում հարցն արագ լուծում է՝ երեխային տեղափոխելով այլ դպրոց:

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված երկրորդ հարցն այսպիսինն է. «Վստահու՞մ եք արդյոք ձեր երեխայի դասղեկին»: Որպես պատասխան ծնողներին առաջարկված «Այո», «Ոչ» և «Ոչ այնքան» տարբերակներից մեր հետազոտության մասնակից 20 ծնողներից 17-ը կամ ծնողների 85%-ն ընտրել են «Այո» տարբերակը, 2 ծնող կամ ծնողների 10%-ն ընտրել է «Ոչ» տարբերակը, իսկ «Ոչ այնքան» տարբերակն ընտրել է 1 ծնող՝ 5%-ը: Հետազոտության մասնակից ծնողների դասղեկի նկատմամբ վստահության հարցի հետազոտության արդյունքները ներկայացնում ենք տրամագիր 1-ի միջոցով.



Տրամագիր 1. Հետազոտության մասնակից ծնողների իրենց երեխայի դասղեկի նկատմամբ վստահության հարցի հետազոտության արդյունքները

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված երրորդ հարցն այսպիսինն է. «Հաճախո՞ւմ եք արդյոք դպրոցի ծնողական ժողովներին»: Որպես պատասխան ծնողներին առաջարկված «Այո», «Ոչ» և «Ոչ այնքան» տարբերակներից մեր հետազոտության մասնակից 20 ծնողներից 17-ը կամ ծնողների 85%-ն ընտրել են

«Այո» տարբերակը, 3 ծնող կամ ծնողների 15%-ն ընտրել է «Ոչ այնքան» տարբերակը, իսկ «Ոչ» տարբերակը չի ընտրել և ոչ մի ծնող: Հետազոտության շրջանակներում մենք ևս մասնակցեցինք վեցերորդ դասարանում հրավիրված ծնողական ժողովին, որի թեման «Սովորողի և սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականություններն» էր: Ծնողները ակտիվորեն մասնակցում էին քննարկումներին, հարցեր տալիս, պարզաբանումներ պահանջում: Հետազոտության մասնակից ծնողների դպրոցի ծնողական ժողովներին հաճախելու վերաբերյալ հարցի հետազոտության արդյունքները ներկայացնում ենք տրամագիր 2-ի միջոցով.



Տրամագիր 2. Հետազոտության մասնակից ծնողների դպրոցի ծնողական ժողովներին հաճախելու վերաբերյալ մասնակից ուսուցիչների հետազոտության արդյունքները

Համադպրոցական և դասարանային ծնողական ժողովները, անկասկած ծնողների հետ աշխատանքի կազմակերպման ամենատարածված ձևն է: Մեր հետազոտության մասնակից ծնողների երեխաները սովորում են յոթերորդ դասարանում, երբ ծնողները դեռևս դպրոցի հետ սերտ կապի մեջ են, ինչով էլ բացատրվում է մեր հետազոտության այս հարցի արդյունքը: Մեկ-երկու տարի անց այս կամ այն պատճառով ծնողական ժողովներից խուսափող ծնողների տոկոսն ավելանում է:

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված չորրորդ հարցը վերաբերվում է դպրոցում ուսուցիչների և ծնողների միջև առավել տիրապետող հարաբերություններին: Որպես պատասխան ծնողներին առաջարկված «Բարյացակամ», «Կոնֆլիկտային», «Անտարբեր» և «Անմիջական» տարբերակներից մեր հետազոտության մասնակից 20 ծնողներից 12-ը կամ ծնողների 60%-ն ընտրել են «Բարյացակամ» տարբերակը, 2 ծնող կամ ծնողների 10%-ն ընտրել է «Անտարբեր» տարբերակը, 6 ծնող կամ ծնողների 30%-ն ընտրել է «Անմիջական» տարբերակը, իսկ «Կոնֆլիկտային» տարբերակը չի ընտրել և ոչ մի ծնող: Հետազոտության մասնակից ծնողների դպրոցում ուսուցիչների և ծնողների միջև առավել տիրապետող հարաբերությունների վերաբերյալ հարցի հետազոտության արդյունքները ներկայացնում ենք տրամագիր 3-ի միջոցով.



Տրամագիր 3. Հետազոտության մասնակից ծնողների և ուսուցիչների միջև դպրոցում առավել տիրապետող հարաբերությունների վերաբերյալ հետազոտության արդյունքները

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված հինգերորդ հարցն է. «Առկա՞ է արդյոք ձեր և ուսուցիչների միջև պահանջների միասնություն»: Ինչպես ակնհայտ երևում է 4 տրամագրից, որպես ծնողներին առաջարկված պատասխան «Այո», «Ոչ» և «Ոչ այնքան» տարբերակներից մասնակից 20 ծնողներից 17-ը կամ ծնողների 85%-ն ընտրել են «Այո» տարբերակը, 3 ծնող կամ ծնողների 15%-ն ընտրել է «Ոչ այնքան»

տարբերակը, իսկ «Ոչ» տարբերակը չի ընտրել և ոչ մի ծնող: Հետազոտության մասնակից ծնողների կարծիքով հիմնականում ուսուցիչների և ծնողների միջև պահանջների միասնությունն առկա է, քանի որ միանշանակ ոչ պատասխան մենք չունենք, իսկ մասնակի դժգոհությունները կարելի է քննարկել: Հետազոտության արդյունքները ներկայացնում ենք տրամագիր 4-ի միջոցով.



Տրամագիր 4. Հետազոտության մասնակից ծնողների և ուսուցիչների միջև պահանջների միասնության վերաբերյալ հետազոտության արդյունքները

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված վեցերորդ հարցն է. «Արդյո՞ք Դուք բավականաչափ տեղեկացված եք դպրոցում ձեր երեխայի գործունեության և այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների մասին»: Ծնողներին առաջարկված «Այո», «Ոչ» և «Ոչ այնքան» պատասխան տարբերակներից մասնակից 20 ծնողներից 18-ը կամ ծնողների 90%-ն ընտրել են «Այո» տարբերակը, 1 ծնող կամ ծնողների 5%-ն ընտրել է «Ոչ այնքան» տարբերակը, իսկ «Ոչ» տարբերակ ընտրել է 1 ծնող: Դպրոցում երեխայի գործունեության և այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկացվածության վերաբերյալ հարցի հետազոտության արդյունքները ներկայացնում ենք տրամագիր 5-ի միջոցով.



Տրամագիր 5. Ծնողների դպրոցում իրենց երեխայի գործունեության և այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկացվածության հարցի հետազոտության արդյունքները

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված յոթերորդ հարցն է. «Ծնողական ժողովների ավարտից հետո իրավիճակն ինչպիսին է ձեր տանը»: Որպես պատասխան ծնողներին առաջարկված «Հանգիստ զրուցում եք երեխայի հետ: Երեխային գովել են», «Երեխային նախատել են, կոնֆլիկտ է առաջացել ուսուցչի հետ» և «Երեխային ուսումնադաստիարակչական գործընթացում ներգրավելու համար համագործակցում ենք դասղեկի և ուսուցիչների հետ» պատասխան տարբերակներից մասնակից 20 ծնողներից 11-ը կամ ծնողների 55%-ն ընտրել են «Հանգիստ զրուցում եք երեխայի հետ: Երեխային գովել են» տարբերակը, 4 ծնող կամ ծնողների 20%-ն ընտրել է «Երեխային նախատել են, կոնֆլիկտ է առաջացել ուսուցչի հետ» տարբերակը, իսկ «Ուսումնադաստիարակչական գործընթացում երեխային ներգրավելու համար համագործակցում ենք դասղեկի և ուսուցիչների հետ» տարբերակն ընտրել է 5 ծնող կամ ծնողների 25%-ը: Ծնողական ժողովների ավարտից հետո տանը տիրող իրավիճակի վերաբերյալ հետազոտության արդյունքները կներկայացնենք տրամա-գիր 6-ի միջոցով.



Տրամագիր 6. Ծնողական ժողովների ավարտից հետո տանը տիրող իրավիճակի վերաբերյալ հետազոտության արդյունքները

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված ութերորդ հարցն է. «Օգնո՞ւմ են արդյոք ծնողական ժողովները ձեզ Ձեր երեխայի դաստիարակության գործում»: Որպես պատասխան ծնողներին առաջարկված «Այո», «Ոչ» և «Ոչ այնքան» տարբերակներից մասնակից 20 ծնողներից 17-ը կամ ծնողների 85%-ն ընտրել են «Այո» տարբերակը, 1 ծնող կամ ծնողների 5%-ն ընտրել է «Ոչ այնքան» տարբերակը, իսկ «Ոչ» տարբերակն ընտրել է 2 ծնող կամ ծնողների 10%-ը: Հետազոտության մասնակից ծնողների երեխայի դաստիարակության գործում ծնողական ժողովների օգնելու վերաբերյալ մեր հարցի հետազոտության արդյունքները կներկայացնենք տրամագիր 7-ի միջոցով.



Տրամագիր 7. Երեխայի դաստիարակության գործում ծնողական ժողովների օգնության վերաբերյալ հետազոտության մասնակից ծնողների հետազոտության արդյունքները

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված իններորդ հարցն է. «Հատկապես ի՞նչն է ձեզ ամենաշատն անհանգստացնում, երբ երեխան գտնվում է դպրոցում»: Որպես պատասխան ծնողներին առաջարկված «Նրա անվտանգությունը», «Նրա հոգեկան առողջությունը», «Նրա ֆիզիկական առողջությունը», «Նրա ուսումնական առաջընթացը» և «Ոչինչ չի անհանգստացնում» տարբերակներից մասնակից ծնողները կարող են ընտրել մեկից ավել տարբերակներ: Հետազոտության մասնակից 20 ծնողներից 18-ը կամ ծնողների 90%-ն ընտրել են «Նրա անվտանգությունը» տարբերակը, 3 ծնող կամ ծնողների 15%-ն ընտրել է «Նրա հոգեկան առողջությունը» տարբերակը, 2 ծնող կամ ծնողների 10%-ն ընտրել է «Նրա ֆիզիկական առողջությունը» տարբերակը, 5 ծնող կամ ծնողների 25%-ն ընտրել է «Նրա ուսումնական առաջընթացը» տարբերակը, իսկ «Ոչինչ չի անհանգստացնում» տարբերակն ընտրել է միայն 1 ծնող կամ ծնողների 5%-ը: Հետազոտության մասնակից ծնողների երեխայի դպրոցում գտնվելիս անհանգստացնող խնդիրների վերաբերյալ մեր հարցի հետազոտության արդյունքները ներկայացնենք տրամագիր 8-ի միջոցով.



Տրամագիր 8. Հետազոտության մասնակից ծնողների երեխայի դպրոցում գտնվելիս անհանգստացնող խնդիրների վերաբերյալ հետազոտության արդյունքները

Հետազոտության մասնակից ծնողներին ուղղված տասներորդ հարցն է. «Ձեր կարծիքով, դպրոցի և ընտանիքի միջև համագործակցությունն արդյո՞ք օգտակար է երեխաների մասնագիտական կողմնորոշման հարցում»:



Տրամագիր 9. Դպրոցի և ընտանիքի միջև համագործակցության օգտակարությունը մասնագիտական կողմնորոշման հարցում ծնողների հետազոտության արդյունքները

Ինչպես երևում է տրամագրից, ծնողներին առաջարկված «Այո», «Ոչ» և «Ոչ այնքան» տարբերակներից մասնակից 20 ծնողներից 16-ը կամ ծնողների 80%-ն ընտրել են «Այո» տարբերակը, 3 ծնող կամ ծնողների 15%-ն ընտրել է «Ոչ այնքան» տարբերակը, իսկ «Ոչ» տարբերակն ընտրել է 1 ծնող կամ ծնողների 5%-ը: Դպրոցի և ընտանիքի միջև համագործակցության օգտակարությունը մասնագիտական կողմնորոշման հարցում ծնողների կարծիքների հետազոտության արդյունքները կներկայացնենք տրամագիր 9-ի միջոցով:

Եզրակացություն

Տեսական աղբյուրների վերլուծությունն ու ընդհանրացումը, ինչպես նաև հետազոտական աշխատանքը հնարավորություն են տալիս ձևակերպելու հետևյալ կարևոր եզրակացությունները.

1. Դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման հիմնական նպատակն է ընտանիքի ներգրավումը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման համակարգում, որտեղ ծնողները հավասարազոր սուբյեկտներ են:
2. Դպրոցի և ընտանիքի համագործակցության զարգացման ձևերն ու միջոցները թույլ կտան ապահովելու այդ գործընթացի արդյունավետությունը և կարող են օգտագործվել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կողմից ընտանիքի հետ տարվող աշխատանքներում:
3. Դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետությունը մեծ մասամբ կախված է դպրոցում դաստիարակության գործընթացի պատասխանատու օղակների մանկավարժական պահանջի և սովորողի կարիքի համադրման կարողությունից:
4. Դպրոց-ընտանիք կապի ամրապնդման նպատակով ուսուցչի կողմից իրականացվող իրականացվող տնայցը կարևոր ներուժ, յուրահատուկ գործառույթներ ունի: Այն օգնում է հասկանալ երեխային ավելի լավ, խորացնում է դպրոց-ընտանիք համագործակցությունը:

Այսպիսով, ուսումնասիրելով երեխաների դաստիարակության գործում դպրոցի և ընտանիքի համագործակցությունը ուսումնասիրելով հասկացանք, որ անելիքներ շատ ունենք:

Գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ.Հ. Երկխոսություններ ծնողների հետ, Երևան, «Զանգակ-97», 2002, 108 էջ:

2. Байбородова Л. Как развивать взаимодействие педагогов и семьи // Воспитательная работа в школе. - М., Изд-во МГУ, 2004. - № 1, стр. 85 - 86.

3. Морозова В.Е. Единство семьи и школы в воспитании учащихся / В.Е.Морозова // Завуч начальной школы. – М.: Академия, 2013. – №1, стр. 22 - 26.

4. Мосейчук С.С. Школа и дом – одна семья: программа совместной деятельности школы, семьи и общественности по воспитанию учащихся / С.С.Мосейчук // Работа социального педагога в школе и микрорайоне. – М.: Академия, 2014. – № 5, стр. 35 - 37.

5. Ражина И.Н. Педагогические условия взаимодействия школы и семьи в духовно-нравственном воспитании школьников / И.Н.Ражина. – М.: Мол. гвардия, 2016. – №9, стр. 66-69.

6. Хапачева С.М. Педагогические условия взаимодействия семьи и школы в процессе формирования личности школьника / С.М.Хапачева, Д.А.Аллахвердян // Образование. Наука. Инновации. – 2015. – №4 (42), стр. 12 - 19.

7. Седов В.А. Развитие взаимодействия родителей и детей в жизнедеятельности общеобразовательной школы: / В.А.Седов. – Курск, Владос, 2002, - 210 стр.

Հավելված 1.

Հարցում ծնողներին

Ընտանիք-դպրոց համագործակցության որակի բարձրացման նպատակով պատասխանեք, խնդրում եմ, հետևյալ հարցերին (ընդգծեք ձեր կարծիքով ճիշտ տարբերակը): Շնորհակալություն մասնակցության համար:

1. Ձեզ դու՞ր է գալիս դպրոցը, որտեղ սովորում են ձեր երեխաները.

ա) այո, բ) ոչ, գ) ոչ այնքան:

2. Վստահու՞մ եք արդյոք ձեր երեխայի դասղեկին.

ա) այո, բ) ոչ, գ) ոչ այնքան:

3. Հաճախո՞ւմ եք արդյոք դպրոցի ծնողական ժողովներին

ա) այո, բ) ոչ, գ) ոչ այնքան:

4. Հատկապես ո՞ր հարաբերություններն են տիրապետող ուսուցիչների և ծնողների միջև ձեր դպրոցում.

ա) բարյացակամ, բ) անտարբեր, գ) կոնֆլիկտային, դ) անմիջական:

5. Առկա՞ է արդյոք ձեր և ուսուցիչների միջև պահանջների միասնություն.

ա) այո, բ) ոչ, գ) ոչ այնքան:

6. Արդյո՞ք Դուք բավականաչափ տեղեկացված եք դպրոցում ձեր երեխայի գործունեության և այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների մասին.

ա) այո, բ) ոչ, գ) ոչ այնքան:

7. Ծնողական ժողովների ավարտից հետո իրավիճակն ինչպիսին է ձեր տանը.

ա) հանգիստ զրուցում եք երեխայի հետ: Երեխային գովել են,

բ) երեխային նախատել են, կոնֆլիկտ է առաջացել ուսուցչի հետ,

գ) երեխային ուսումնադաստիարակչական գործընթացում ներգրավելու համար համագործակցում ենք դասղեկի և ուսուցիչների հետ:

8. Օգնո՞ւմ են արդյոք ծնողական ժողովները ձեզ Ձեր երեխայի դաստիարակության գործում.

ա) այո, բ) ոչ, գ) ոչ այնքան:

9. Հատկապես ի՞նչն է ձեզ ամենաշատն անհանգստացնում, երբ երեխան գտնվում է դպրոցում.

ա) նրա անվտանգությունը,

բ) նրա հոգեկան առողջությունը,

գ) նրա ֆիզիկական առողջությունը,

դ) նրա ուսումնական առաջընթացը,

ե) ոչինչ չի անհանգստացնում,

զ) _____

10. Ձեր կարծիքով, դպրոցի և ընտանիքի միջև համագործակցությունն արդյո՞ք օգտակար է երեխաների մասնագիտական կողմնորոշման հարցում.

ա) այո, բ) ոչ, գ) ոչ այնքան: